ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 08-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ավագանու անդամների քվեարկության արդյունքները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքի ավագանու՝ 15.03.2019 թվականի նիստի օրակարգը /կցվում է/:

Ավագանի՝ (կողմ - 12) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

# ՕՐԱԿԱՐԳ

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.03.2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ԺԱՄԸ՝ 16:00

1. Ապարան համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

   /զեկ. Կ.Եղիազարյան/

2. Ապարան համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2018 թվականի բյուջեի և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կատարման մասին:

   /զեկ. Կ.Եղիազարյան/

3. <<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>> ՀՈԱԿ աշխատակիցների 2019թ. թվաքանակը, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

   /զեկ. Գ.Երեմյան/

4. <<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ աշխատակիցների 2019թ. թվաքանակը, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

   /զեկ. Գ.Երեմյան/

5. <<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ աշխատակիցների 2019թ. թվաքանակը, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

   /զեկ. Գ.Երեմյան/

6. <<Ապարան համայնքի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ի 2019թ. հաստիքացուցակում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   /զեկ. Գ.Աբրահամյան/

7. <<Ապարան համայնքի Ապարանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի անվանակոչության մասին:

   /զեկ. Գ.Խաչատրյան/

8. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Արագած գյուղի քարտեզագրման աշխատանքների ընթացքում անհայտ քաղաքացու անվամբ հաշվառված բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   /զեկ. Վ.Սուքիասյան/

9. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

   /զեկ. Վ.Սուքիասյան/

10. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

    /զեկ. Ռ.Գալստյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

    /զեկ. Վ.Սուքիասյան/

12. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

    /զեկ. Վ.Սուքիասյան/

13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

    /զեկ. Վ.Սուքիասյան/

14. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

    /զեկ. Վ.Սուքիասյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ Ν 09-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարան համայնքի 2018 թ. բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել համայնքի զարգացման 2018 թ. ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Համայնքի ղեկավար պարոն Կ. Եղիազարյանին՝
ա) ակտիվացնել աշխատանքները՝ հողի և գույքի հարկերի բազաների ճշգրտման, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրման ուղղությամբ.
բ) հետևողական աշխատանքներ ծավալել և վարչական միջոցներ ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների վճարումից խուսափողների նկատմամբ, նվազագույնի հասցնել ապառքները:
Այդ աշխատանքներում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն և թափանցիկություն.
գ) անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի կատարման ուղղությամբ: Ապահովել համայնքի զարգացման և տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումը.
դ) բարձրացնել աշխատակազմի և բնակավայրերի վարչական ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2019 թ. բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման, պլանի կատարման, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Ավագանի՝ (կողմ - 12) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)
Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապարանի համայնքապետարանի 2018 թ. գործունեությունը նպատակաուղղված է եղել համայնքի 2018 թ. բյուջեի կատարումն ապահովելու և դրա շնորհիվ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղությունների բնականոն գործունեությունն ու բնակավայրերում առկա առաջնային խնդիրների լուծմանը:

Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ համայնքային կայքի, սոց. ցանցերի միջոցով: Ձևավորվել է համայնքի ղեկավարին կից բյուջեի և զարգացման ծրագրերի կառավարման գործընթացների խորհրդակցական մարմին:

Ավագանու որոշումները, համայնքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, համայնքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն մշտապես լուսաբանվել են համայնքային կայքում, որը հասու է եղել համայնքի բոլոր բնակիչներին:

2018 թ. ընթացքում կայացել է ավագանու 7 նիստ, ընդունվել են 89 որոշումներ:

Ընդունվել են համայնքապետի 357 որոշումներ, 254 կարգադրություններ:

2018թ. հունվարից բոլոր բնակավայրերի տեղական հարկերի շտեմարանները տեղափոխվել և միավորվել են ընդհանուր համայնքային շտեմարաններին: Տարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել գյուղական բնակավայրերի հողի և գույքի շտեմարանների ճշգրտման,համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման և այդ ուղղությամբ բնակիչների դժգոհությունները նվազագույնի հասցնելու գործում:

Դրա շնորհիվ շտեմարանները դարձել են ավելի կառավարելի և վերահսկելի, ճշգրտման աշխատանքերը շարունակվում են:

Օրեցօր նկատելի են պարտաճանաչ հարկատուների թվաքանակի աճման միտումներ:

Սեփական եկամուտների հավաքագրման գործում տարվում են ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ:

2018թ. վարչական բյուջեն կատարվել է 95,8 %-ով:

### Համայնքի 2018 թ. բյուջեի ձևավորման աղբյուրները և կատարված ցուցանիշները՝

| Եկամտատեսակներ | Պլան /հազ. դրամ/ | Կատարված | Կատ. % |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարության կողմից տրված դոտացիա | 416.971.700 | 416.971.700 | 100,0 |
| ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր | 5.546.800 | 5.546.800 | 100,0 |
| Արվեստի դպրոցին տրված սուբվենցիա | 4.200.700 | 4.200.700 | 100,0 |
| Համայնքի սեփական եկամուտներ | 234.450.500 | 206.521.300 | 88,1 |
| Ընդամենը վարչական բյուջեն՝ | 661.169.700 | 633.240.500 | 95,8 |
| Ֆոնդային բյուջեի նախատեսված մուտքեր | 60.000.000 | 8.124.500 | 13,5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ՝ | 721.169.700 | 641.365.000 | 88,9 |

2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄՈՒՄՆ ԸՍՏ ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԻ՝

| N | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ | Պլան /հազ. դրամ/ | Կատարված | Կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 60.070,0 | 58.805,4 | 98,0 |
| 2 | Հողի և գույքի վարձավճար | 19.211,0 | 17.500,0 | 91,1 |
| 3 | Գույքահարկ | 75.880,0 | 79.049,9 | 104,2 |
| 4 | Տուրքեր և վճարներ | 31.112,0 | 31.981,0 | 102,8 |
| 5 | Վարձավճարներ /աղբահանության և խմելու ջրի/ | 48.200,0 | 19.184,4 | 39,8 |
| Ընդամենը վարչական բյուջե՝ | | 234.473,0 | 206.521,3 | 88,1 |
| | Կապիտալ գործառույթներից մուտքեր՝ | 60.000,0 | 8.124,5 | 13,5 |
| Ընդամենը՝ | | 294.473,0 | 214.645,8 | 72,9 |

Համայնքի բյուջեի սեփական եկամուտների թերակատարման պատճառը աղբահանության և խմելու ջրի վարձավճարների գանձման ցածր մակարդակն է՝ այն կատարվել է 39,8%-ով, որից՝

Ապարան քաղաքում՝ 14.500,0 հազար դրամի դիմաց գանձվել է 11.367,1 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 78,4 %, իսկ գյուղական 20 բնակավայրերում՝ 33.700,0 հազար դրամի դիմաց գանձվել է 7.817,3 հազ. դրամ, պլանը կատարվել է 20,7 %:

Հավաքագրման ցուցանիշը հատկապես անբավարար է Քուչակ (2,1%), Եղիպատրուշ (2,2%), Ձորագլուխ (0), Թթուջուր (3,6%), Շենավան (0,3%) գյուղերում:

Աղբահանության և խմելաջրի վարձավճարների թերակատարման հիմնական պատճառն այն է, որ գյուղական բնակավայրերում վերը նշված ծառայությունների դիմաց վարձավճարի հավաքագրումներ կատարվում էր առաջին անգամ, բնակիչները հոգեբանորեն պատրաստ չէին հարկման այդ նոր բեռին:

Հարկերի հավաքագրման աշխատանքներն ավելի պատշաճորեն կատարելու, ապառքները նվազագույնի հասցնելու գործում առկա են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Առանց աղբահանության և խմելաջրի վճարների ցուցանիշների բյուջեի կատարողականը կազմում է՝ 100,6 %:

Հաշվի առնելով համայնքի խոշորացման առաջին տարվա հանգամանքը, պարտքատերերի շրջանում ավելի հաճախ տարվել են բացատրական և նախազգուշական աշխատանքներ, չեն կիրառվել վարչական վարույթներ:

Դեռևս մեծ թիվ են կազմում մահացած հարկատուների ժառանգություն չբացողները, բնակավայրերից երկար տարիներ բացակայողները, որոնց ապառքները կազմում են ընդհանուր ապառքների 20-25% - ը:

Քիչ չեն նաև նրանք, ովքեր տարբեր պատճառաբանություններով, այդ թվում՝ հիմնականում սոցիալական վիճակից ելնելով, կամ հողամասերը երկար տարիներ չմշակելու և այլ պատճառներով, ուղղակի չեն վճարում:

Հողի հարկի գծով պլանը կատարվել է 98 %-ով:

Հողի հարկի գծով անբավարար ցուցանիշներ են ունեցել՝ Արագած (75%), Եղիպատրուշ (89%), Վարդենիս (79%), Ջրամբար (92%), Նիգավան (79 %), Լուսագյուղ (86%) գյուղերը:

Գույքահարկի պլանը կատարվել է 104,2 %-ով:

Գույքահարկի գծով անբավարար ցուցանիշներ են ունեցել՝ Արագած (87,8%), Վարդենիս (88,8%), Ջրամբար (35,1%), Թթուջուր (87,3 %), Ծաղկաշեն (90,1%), Ձորագլուխ (90,7%), Սարալանջ (92,4%):

Վարձակալության պլանը կատարվել է 91,1 %-ով:

Վարձակալությամբ են տրված 933,196 հա հողատարածքներ:

Վարձակալած հողերի տարեկան հաշվարկային վարձավճարը կազմում է 9.821.924 դրամ, ապառքը կազմում է 7.764.298 դրամ:

Անբավարար ցուցանիշներ են ունեցել՝ Ապարան (83,5%), Արագած (77,7%), Երնջատափ (77,3%), Վարդենուտ (73,5%), Ձորագլուխ (79,6%), Թթուջուր (20,8%), Կայք (79,6%), Լուսագյուղ (80,6%):

Խնդիրներ կան տեղական տուրքերի և վճարների հավաքագրման գործում:

Տնտեսվարող սուբյեկտն առանց համայնքապետի որոշման իրավունք չունի օրենքով սահմանված գործունեությունը ծավալել, հակառակ պարագայում այն համարվում է ապօրինի:

Թեև ժամանակին բոլորը գրավոր ծանուցվել են, ընթացքում բազմիցս բանավոր և գրավոր նախազգուշացվել են, սակայն խնդիրը վերջնականապես չի կարգավորվում:
Չնայած Տեղական տուրքերի և վճարների պլանը կատարվել է 102, 8 %, սակայն խնդիրը վերաբերվում է թույլտվությունների ժամանակին ստացմանը և որոշ գործարարների կողմից դժվարությունների ստեղծմանը և երբեմն էլ՝ խուսափմանը: Նմանների նկատմամբ չեն կիրառվել վարչական վարույթներ:
Վերլուծությունը փաստում է, որ հարկատուների շուրջ 50 %-ն անպատասխանատու վերաբերմունք են դրսևորում տեղական հարկերի, տուրքերի և վճարների ժամանակին վճարման գործում, նրանց մոտ բացակայում է համայնքի նկատմամբ պատասխանատվության և քաղաքացիական պարտքի զգացումը, իսկ համայնքապետարանի կողմից նրանց նկատմամբ ցուցաբերվում է հանդուրժողականություն, չի կիրառվում օրենքով սահմանված վարչական միջոցներ:
01.02.2019 թ դրությամբ հողի հարկի ապառքները կազմել են՝
Ֆիզիկական անձանց՝ 96.097.000 դրամ, տույժերը՝ 91.549.700 դրամ
Իրավաբանական անձանց՝ 1.062.600 դրամ, տույժերը՝ 756.200 դրամ
Գույքահարկի գծով՝
Ֆիզիակական անձանց՝ 65.671.500 դրամ, տույժերը՝ 25.861.300 դրամ
Իրավաբանական անձանց՝ 5.266.800 դրամ, տույժերը՝ 7.824.300 դրամ
500.000 դրամը գերազանցող պարտքեր ունեն 11 ֆիզիակական և 3 իրավաբանական անձիք:
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարման 88,08 % ցուցանիշից ցածր արդյունքներ են ունեցել՝ Արագած (73,6%), Եղիպատրուշ (78,7 %), Վարդենիս (75,4%), Ջրամբար (57,4%), Քուչակ (87,4%), Ձորագլուխ (73,8%), Թթուջուր (74,7%), Նիգավան (79,7%), Լուսագյուղ (76,2%), Սարալանջ (80,97%), Ծաղկաշեն (87,5%) գյուղերը:

## 2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| N | Հոդվածի բովանդակություն | ՊԼԱՆ Հազ. դրամ | Կատարվել է Հազ. դրամ | Կատարման % |
|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ | 806.658,1 | 715.883,9 | 88,7 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝ | 446.326,1 | 376.713,1 | 84,4 |
| | ՈՐԻՑ՝ | | | |
| - | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 257.389,5 | 238.869,8 | 92,8 |
| - | Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ | 37.048,7 | 29.196,2 | 78,8 |
| - | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 140.586,2 | 97.345,7 | 69,2 |
| - | ՔԿԱԳ բաժնի պահպանում | 5.548,9 | 5.548,7 | 100,0 |
| - | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 5.752,7 | 5.752,7 | 100,0 |
| 2 | Տնտեսական հարաբերություններ | 5.000,0 | 1.420,0 | 28,4 |
| - | Որից՝ ճանապարհային տրանսպորտ | 5.000,0 | 1.420,0 | 28,4 |
| 3 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 50.900,0 | 50.308,8 | 98,8 |
| - | Որից՝ աղբահանություն և սանիտարական մաքրում | 50.900,0 | 50.308,8 | 98,8 |
| 4 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 149.512,1 | 133.250,9 | 89,1 |
| | Որից՝ | | | |
| - | Կոմունալ ծառայություն | 116.669,1 | 110.573,3 | 94,8 |
| - | Արտաքին լուսավորություն | 32.843,0 | 22.677,5 | 69,0 |
| 5 | Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով | 31.630,0 | 31.576,7 | 99,8 |
| | ՈՐԻՑ՝ | | | |
| - | Գրադարանի մասով | 6.085,0 | 6.063,4 | 99,6 |
| - | Մշակույթի մասով | 15.880,0 | 15.848,3 | 99,8 |
| - | Արվեստ | 9.665,0 | 9.665,0 | 100,0 |
| 6 | Կրթության բնագավառի մասով՝ | 119.090,0 | 118.684,4 | 99,7 |
| | ՈՐԻՑ՝ | | | |
| - | Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝ | 58.330,0 | 58.205,3 | 99,8 |
| - | Նախնական մասնագիտական կրթության բնագավաի մասով՝ | 950,0 | 950,0 | 100,0 |
| - | Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով | 59.810,0 | 59.529,1 | 99,5 |
| 7 | Սոցիալական հատուկ արտոնություններ բնագավառի մասով | 4.200,0 | 3.930,0 | 93,6 |

Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ:
Դրամական աջակցություն է ցուցաբերվել 108 մարդու՝ 3.930.000 դրամի չափով, որից՝ սոցիալապես անապահովության պատճառով՝ 80 մարդու՝ 2.240.000 դրամի, բուժման նպատակով՝ 18 մարդու՝ 760.000 դրամի, ուսանողական վարձավճարներ՝ 6 մարդու՝ 500.000 դրամի, հուղարկավորության նպատակով՝ 4 հոգու՝ 430.000 դրամի:
Վարձավճարների զեղչման արտոնություններ են կիրառվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցներում՝ ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաների համար:
Մարզադպրոցներում և մշակույթի կենտրոնում շուրջ 500 երեխաներ ստանում են անվճար ուսուցում:
Համայնքային ենթակայության հանդիսասրահներն իրենց կոմունիկացիաներով /սպասք, գազ, էլ. էներգիա/ անվճար տրամադրվել են բնակիչներին՝ սգո արարողությունների կատարման նպատակով:
Հնարավորին աջակցություն է ցուցաբերվել հանրակրթական դպրոցներին և առողջապահական հիմնարկներին ամենատարբեր խնդիրների լուծման ուղղությամբ:
Անցկացվել են բազմաթիվ համայնքային միջոցառումներ, որոնք նպաստել են բնակչության հանգստի, ազատ ժամանցի կազմակերպմանը, երեխաների գեղագիտական և մարզական դաստիարակությանը:
Առաջին անգամ անցկացվեց քանդակագործության միջազգային սիմպոզիում, որին մասնակցեցին աշխարհի 8 երկրների 13 քանդակագործներ, որի արդյունքում համայնքին նվիրվեցին 13 հոյակերտ քանդակներ:
Ավանդույթ են դարձել հետևալ միջոցառումները՝
Բանակի օր, Մայրության տոն, Հաղթանակի տոն, Եղեռնի զոհերի հիշատակի օր, Բաշ-Ապարանի հերոսամարտի տոնակատարություն, երեխաների միջազգային օր, ջրի տոն, ուսուցչի տոն, դպրության տոն, բազմաթիվ համերգներ, փառատոններ, սպորտային տարբեր առաջնություններ: Հաղթողներին հանձնվել են նվերներ, դիպլոմներ, գավաթներ և դրամական պարգևներ:
Անցկացված միջոցառումների ցանկը կցվում է:
Ֆոնդային բյուջեի մասով մուտքերի պլանը կատարվել է 13,5 % -ով:
Մուտքերի ապահովման թերակատարման պատճառները տարբեր են՝
- Խոշորացման պարագայում հիմնական միջոցների օտարման վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրման և քննարկման ժամանակային առումով իրավիճակի թերի տիրապետումը:
Մինչև 2018 թ. ապրիլ ամիսը հողամասը սեփականության իրավունքով անհատույց տիրապետող սեփականատիրոջ փոփոխության դեպքում հողի կադաստրային արժեքի գանձվող ամբողջ գումարը մուտքագրվում էր համայնքային բյուջե, իսկ դրանից հետո, ՀՀ կառավարության հրահանգի և ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով այն փոխանցվել է պետբյուջե:
Չնայած Ֆոնդային բյուջեի մուտքերի 13,5 % ապահովմանը, հսկայածավալ աշխատանքներ են կատարվել Ապարան քաղաքում և 20 գյուղական բնակավայրերում:
Բաշ Ապարանի հերոսամարտի 100-ամյակի կապակցությամբ, ծրագրերի քանակով և բազմազանությամբ, համեմատաբար առավելություն է տրվել Ապարան քաղաքին:
Առանձին գյուղական բնակավայրերում իրականացված ծրագրերը եղել են ավելին, քան մինչև խոշորացումը:
Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում 2018 թ. իրականացված ծրագրերն ըստ բնակավայրերի կից ներկայացված է հավելված 2-ում:
Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով առկա պրոբլեմներն ու դժվարությունները, խնդիր է դրվում պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավոր առավելագույնը ապահովելու բոլոր բնակավայրերի բավարար կենսագործունեությունը, կայուն և հետևողական զարգացումը:
Համայնքապետարանի գործունեության ապահովման և արդյունավետության բարձրացման գործում արդյունավետ է եղել ավագանու գործնական և համերաշխ աշխատանքը, խնդիրները համատեղ ուժերով հաղթահարելու հետևողականությունը, կամքն ու վճռականությունը:

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

| N | Բնակավայր | ՀՈՂԻ ՀԱՐԿ | | | ՀՈՂ-ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | | | ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ | | | ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐ | | | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ԱՂԲԻ ԵՎ ՋՐԻ | | | ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | | | ԸՆԴԱՄԵՆԸ ֆոնդային բյ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ | % | Գք | ՀՈՂ |
| 1 | ԱՊԱՐԱՆ | 8500 | 9517.69 | 112,0 | 4200 | 3506.0 | 83.48 | 26000 | 25807.68 | 99.26 | 20900 | 19304,8 | 92.4 | 14500 | 11367.1 | 78.4 | 74100 | 69503.3 | 93.80 | | 3963.6 |
| 2 | Արագած | 5000 | 3736.0 | 75,0 | 3000 | 2330.1 | 77.67 | 13000 | 11410.93 | 87.78 | 6681 | 7344.5 | 109.9 | 9000 | 2157.4 | 24.0 | 36681 | 26978.9 | 73.55 | | 1171.6 |
| 3 | Արայի | 1300 | 1290.9 | 99,0 | 520 | 513.06 | 98.67 | 1400 | 1718.03 | 122.72 | 24 | 26.7 | 111.3 | 850 | 120.3 | 14.2 | 4094 | 3669.0 | 89.62 | | |
| 4 | Ափնա | 2800 | 3105.3 | 111,0 | 550 | 492.5 | 89.55 | 2300 | 2836.31 | 123.32 | 1034 | 1336.1 | 129.2 | 850 | 703.4 | 82.8 | 7534 | 8473.6 | 112.47 | | 442002 |
| 5 | Երնջատափ | 3200 | 3278.16 | 102,0 | 650 | 502.5 | 77.31 | 1250 | 1730.47 | 138.44 | 50 | 231.2 | 462.4 | 950 | 569.1 | 59.9 | 6100 | 6311.4 | 103.47 | | 1615.6 |
| 6 | Եղիպատ | 2500 | 2223.5 | 89,0 | 580 | 610.77 | 105.31 | 1050 | 1236.22 | 117.74 | 40 | 14.0 | 35.0 | 1050 | 22.8 | 2.2 | 5220 | 4107.2 | 78.68 | | 88.8 |
| 7 | Վարդենուտ | 3100 | 3142.3 | 101,0 | 600 | 441.1 | 73.51 | 1500 | 2684.79 | 178.99 | 450 | 1868.8 | 415.3 | 2150 | 348.9 | 16.2 | 7800 | 8485.9 | 108.79 | | 897.0 |
| 8 | Վարդենիս | 3300 | 2608.0 | 79,0 | 500 | 587.6 | 117.52 | 2800 | 2485.23 | 88.76 | 28 | 14.0 | 50.0 | 1050 | 91.9 | 8.8 | 7678 | 5786.7 | 75.37 | | |
| 9 | Հարթավան | 4600 | 4831.9 | 105,0 | 800 | 790.25 | 98.78 | 2900 | 2763.81 | 95.30 | 654 | 559.5 | 85.6 | 2800 | 2185.1 | 78.0 | 11754 | 11130.6 | 94.70 | | |
| 10 | Ջրամբար | 700 | 641.4 | 92,0 | 1 | 15.067 | 1507 | 1000 | 351.233 | 35.12 | 52 | 29.1 | 56.0 | 250 | 113.6 | 45.4 | 2003 | 1150.4 | 57.43 | | |
| 11 | Ծաղկաշեն | 2200 | 2285.23 | 104,0 | 260 | 260.29 | 100.11 | 3200 | 2881.54 | 90.05 | 22 | 22.0 | 100.0 | 1000 | 395.3 | 39.5 | 6682 | 5844.4 | 87.46 | | |
| 12 | Ձորագլուխ | 1000 | 1030.5 | 103,0 | 1200 | 954.72 | 79.56 | 700 | 634.993 | 90.71 | 0 | 0.0 | 0 | 650 | 0.0 | 0.0 | 3550 | 2620.2 | 73.81 | | |
| 13 | Թթուջուր | 2020 | 2024.4 | 100,0 | 240 | 50 | 20.83 | 630 | 549.745 | 87.26 | 22 | 14.5 | 65.9 | 650 | 23.7 | 3.6 | 3562 | 2662.3 | 74.74 | | |
| 14 | Չքնաղ | 1700 | 1658.0 | 98,0 | 1000 | 1103.0 | 110.30 | 600 | 851.632 | 141.94 | 1 | 310.4 | 310.37 | 500 | 47.1 | 9.4 | 3801 | 3970.1 | 104.45 | | |
| 15 | Կայք | 1400 | 1480.2 | 106,0 | 500 | 397.8 | 79.56 | 1500 | 2145.58 | 143.04 | 28 | 64.0 | 228.6 | 900 | 368.3 | 40.9 | 4328 | 4455.9 | 102.95 | | 455.68 |
| 16 | Նիգավան | 3200 | 2528.6 | 79,0 | 1000 | 1149.5 | 114.95 | 1150 | 1159.86 | 100.86 | 44 | 22.0 | 50.0 | 900 | 158.0 | 17.6 | 6294 | 5018.0 | 79.73 | | |
| 17 | Լուսագյուղ | 2700 | 2324.3 | 86,0 | 250 | 201.55 | 80.62 | 800 | 1113.05 | 139.13 | 50 | 57.0 | 114.0 | 1300 | 192.3 | 14.8 | 5100 | 3888.2 | 76.24 | | |
| 18 | Շենավան | 3800 | 3847.3 | 101,0 | 1500 | 1502.9 | 100.19 | 6000 | 6239.32 | 103.99 | 120 | 50.0 | 41.7 | 3800 | 11.0 | 0.3 | 15220 | 11650.5 | 76.55 | | |
| 19 | Սարալանջ | 850 | 824.7 | 97,0 | 60 | 71.6 | 119.33 | 800 | 738.977 | 92.37 | 12 | 12.0 | 100.0 | 500 | 151.9 | 30.4 | 2222 | 1799.1 | 80.97 | | |
| 20 | Քուչակ | 4600 | 4826.87 | 105,0 | 1600 | 1528.8 | 95.55 | 6600 | 8987.08 | 136.17 | 900 | 206.0 | 22.9 | 4200 | 89.9 | 2.1 | 17900 | 15638.6 | 87.37 | | |
| 21 | Շողակն | 1600 | 1600.2 | 100,0 | 200 | 491.55 | 245.8 | 700 | 723.386 | 103.34 | 0 | 494.5 | 489.5 | 350 | 67.4 | 19.3 | 2850 | 3377.1 | 118.49 | | |
| | ԸՆԴԱՄԵՆ | 60070 | 58805.4 | 98,0 | 19211 | 17500.6 | 91.10 | 75880 | 79049.9 | 104.18 | 31112 | 31981 | 102.8 | 48200 | 19184.4 | 39.8 | 234473 | 206521.3 | 88.08 | | 8.124,5 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

| | Բնակավայր | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը |
|---|---|---|---|
| 1 | Ք. Ապարան | Ասֆալտապատում և ասֆալտի փոսային նորոգումներ՝ Նժդեհի, Գայի, Մ. Գևորգի, Մաշտոցի, Ծաղկունյաց, Աբովյան, Բաբաջանյան փողոցներում | 9.290.000 |
| | | Ասֆալտապատում և ասֆալտի փոսային նորոգումներ՝ Բաղրամյան 10, 17,19, 25 բնակելի շենքերի բակերում, հարակից մայթերի ասֆալտապատում | 21.796.000 |
| | | Բաղրամյան փողոցի եզրաքարերի փոխարինում նորերով, մայթերի ասֆալտապատում, գազոնների բարեկարգում և ծառատնկում | 6.880.000 |
| | | Բաղրամյան փողոցի թիվ 10,14, 17,19,25 բնակելի շենքերի շքապատշգամնե-րի հիմնանորոգում | 19.103.600 |
| | | Բաղրամյան փողոցի վրա գտնվող բնակելի շենքերի ճակատային պատերի ավազաշիթային մաքրում, ներկում | 4.222.300 |
| | | Գիշերային լուսավորության անցկացում՝ Տոնոյան, Հերոսամարտի, Տեր Տաճատ, Ջալալյան և Չարենցի փողոցներում, բնակելի շենքերի բակերում | 2.966.000 |
| | | Բաղրամյան փողոցում երկկողմանի գիշերային լուսավորության դիոդային լուսարձակների տեղադրում /էլ. սյուները համայնքի ներդրում/ | Դոնոր,<br>Հ՝ 3.100.000 |
| | | Հրապարակում և հանգստյան գոտիներում դարբնագործ գիշերային լուսավորության սյուների և լուսարձակների տեղադրում | 16.245.200 |
| | | Բաղրամյան փողոցի վրա գտնվող ցանկապատերի և հենապատերի նորոգ. | 510.000 |
| | | Տ. Պետրոսյանի անվան պուրակի կառուցապատում | |
| | | Բաղրամյան 17,19,25, 46 բնակելի շենքերի շրջակայքի բարեկարգում, հանգստյան գոտիների ստեղծում և կառուցապատում | 14.381.700 |
| | | Բաղրամյան 6 բ/շ հանգստյան գոտու և խաղահրապարակի կառուցում | 3.301.500 |
| | | Բաղրամյան 10 բ/շենքի բակում խաղադաշտի կառուցում | 2.200.000 |
| | | Բաղրամյան 8 բ/շ տանիքի հիմնանորոգում | 2.800.000 |
| | | Արվեստի դպրոցի վերանորոգում | 8.348.000 |
| | | Նորակառույց մանկապարտեզի շենքի շահագործում, գույքավորում | Դոնոր |
| | | Մանկապարտեզի տարածքի ցանկապատում և բարեկարգում | 960.000 |
| | | Արտավայրերի ջրարբիացման 2-րդ փուլի մեկնարկ՝ համայնքի ներդրում | 2.350.000 |
| | | Համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման կենտրոնի վերանորոգում, նոր գույքերով և տեխնիկական միջոցներով ապահովում | Դոնոր |
| | | | 118.454.300 |

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Բոլոր գյուղերի վարչական տարածքներում՝
Խմելու ջրի համակարգի պահպանություն և շահագործում
Աղբահանության իրականացում
Գիշերային լուսավորության համակարգի պահպանություն և շահագործում
Ճանապարհների ձմեռային պահպանություն և շահագործում
Ոռոգման ներգյուղական առուների մաքրում և շահագործում

| N | Բնակավայր | Իրականացված ծրագրի անվանումը | Արժեքը |
|---|---|---|---|
| 1-12 | 12 գյուղեր | Նոր համակարգիչների և տեխնիկական միջոցների տրամադրում | Դոնոր |
| 13-17 | Արայի | Գիշերային լուսավորության անցկացում /30 կետ/ | 646.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 1.653.000 |
| | | Խաղասենյակի վերանորոգում | 499.000 |
| | | Սելավատարների մաքրում | 200.000 |
| | | Երեխաների վաղ մանկական զարգացման կենտրոնի գործունեություն | 503.800 |
| 18-24 | Արագած | Եկեղեցու ճանապարհի կառուցապատում | 2.630.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 3.933.000 |
| | | Մշակույթի կենտրոնի սեպտիկ հորի կառուցում | 398.000 |
| | | Ոռոգման ջրատարի կառուցում | 588.000 |
| | | Ոռոգման առուների և սելավատարի մաքրում | 416.000 |
| | | Հակակարկտային 2 կայանի տեղադրման արժեքի հատկացում | 4.800.000 |
| | | Պարասրահի վերանորոգում /Լեհաստանի դեսպանատան և Եվրասիա հմ/ | Դոնոր |
| 25-27 | Ափնագյուղ | Գիշերային լուսավորության անցկացում /36 կետ/ | 645.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 1.691.000 |
| | | Հանդիսասրահի վերանորոգում | Ընթացքում |
| 28-30 | Եղիպատրուշ | Խմելու ջրագծի 100 գծմ հատվածի կառուցում | 250.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 2.071.000 |
| | | Երիտասարդական կենտրոնի ստեղծման համայնքի ներդրում | 425.000 |
| 31-35 | Երնջատափ | Գիշ.լուսավորության անցկացում /16 կետ/ և բնակելի շենքերի բակերում | 400.000 |
| | | Եկեղեցու շրջակայքի ասֆալտապատում, սալիկապատում և բարեկարգում | 1.993.000 |
| | | Հեղեղատների վրա 2 կամրջի կառուցում՝ գյուղի ներդրմամբ | 361.500 |
| | | Խմելու ջրի ջրագծերի նորոգում, ոռոգման առուների մաքրում, այգեգործակ թաղամասի ճանապարհների հարթեցում և աղբավայրի մաքրում | 362.000 |
| | | Բնակելի շենքերի կոյուղագծի վերակառուցում | 2.422.000 |
| 36-40 | Թթուջուր | Գիշ. լուսավորության անցկացում /23 կետ/ | 865.600 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 529.000 |
| | | Հանդիսության սրահի նախամուտքի կառուցում | 1.086.700 |
| | | Խմելու ջրի և ոռոգման ջրագծերի վերանորոգում | 153.000 |
| | | Երեխաների ՎՄԶ կենտրոնի հիմնում և գործունեություն | 78.300 |
| 41-44 | Լուսագյուղ | Ճանապարհի ասֆալտապատում՝ 600 գծմ | Մարզպետ |
| | | Եկեղեցու ճանապարհի հիմնանորոգում | 150.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 581.200 |
| | | Գիշ. լուսավորության 50 սյունների տեղադրում | 156.400 |
| 45-48 | Ծաղկաշեն | Ոռոգման ցանցի կառուցում /դոնոր՝ 9.000.000/ համայնքի ներդրում | 3.000.000 |
| | | Ջրի խորքային հորի կառուցման համայնքի ներդրում | 278.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 722.000 |
| | | Երեխաների վաղ մանկական զարգացման կենտրոնի գործունեություն | 360.000 |
| 49-50 | Ջրամբար | Բնակելի շենքի տանիքի մասնակի նորոգման թիթեղի հատկացում | 78.000 |
| | | Խմելու ջրի ժ/քանակի ավելացում, ջրագծի և կոյուղագծի նորոգում,էլ.սարք. | 120.000 |

| | | | |
|---|---|---|---|
| 51-54 | Կայք | Մատուռի հիմնանորոգում | Բարերար |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 780.500 |
| | | Խմելու ջրի նոր պոմպի տեղադրում | դոնոր |
| | | Երեխաների վաղ մանկական զարգացման կենտրոնի գործունեություն | 360.000 |
| 55 | Չքնաղ | Գիշերային լուսավորության /30 կետ/ անցկացում | 1.210.000 |
| 56-61 | Հարթավան | Գիշերային լուսավորության տեղադրում /24 կետ/ | 637.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 3.382.000 |
| | | Կանգառում սպասասրահի վերանորոգում | 569.500 |
| | | Հանդիսության սրահի խոհանոցի նորոգում | 648.000 |
| | | Հանդիսասրահը սեղան-նստարաններով ապահովում | 560.000 |
| | | Խմելու ջրի ջրագծերի նորոգում, նոր պոմպի տեղադրում | 230.000 |
| 62-67 | Ձորագլուխ | Գիշ. լուսավորության անցկացում /22 կետ/ | 174.000 |
| | | Հանդիսության սրահի վերանորոգում, խաղասենյակի ստեղծում | Դոնոր |
| | | Համայնքի կենտրոնի արտաքին պատերի նորոգում-սվաղում | 901.000 |
| | | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 904.500 |
| | | Գրասենյակային գույքի հատկացում | 215.000 |
| | | Երեխաների ՎՄԶ կենտրոնի հիմնում և գործունեություն | 323.000 |
| 68-72 | Նիգավան | Ճանապարհների խճալցում և բարեկարգում | 1.118.000 |
| | | Խմելու ջրի 2-րդ խորքային հորի կառուցում | Դոնոր |
| | | Խմելու ջրի 1-ին խորքային պոմպի նորոգում | 80.000 |
| | | Խմելու ջրի նոր համակարգի կառուցման նախագծերի պատրաստում | 2.700.000 |
